



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի, 2021 թվականի № 11-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալտողական մեղիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի հունվարի 18-ի N 35-Ա որոշման 5-րդ կետը և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշմամբ հաստատված Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգի 6-րդ և 7-րդ կետերը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի և հանրային հեռարձակողների բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Հանրային հեռարձակողի խորհրդի 2022-2024 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2022 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի նախագծին՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

11 մարտի, 2021 թվականի

ք. Երևան